

**ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 5**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ**

UBS <sup>4</sup>	NKJV	NRSV	TEV	NJB
Կանոնների նոր կյանքի համար	Քայլեր սիրո մեջ	Հեթանոս կյանքից հրաժարվելու հորդոր	Լույսի մեջ ապրել	Քրիստոսի մեջ Նոր Կյանքը
4:25-5:5	5:1-7	(4:17-5:20) 4:25-5:2	5:1-2 5:3-5	(4:17-5:20) 4:25-5:20
Քայլեր Լույսի Որդիների պես	Քայլեր լույսի մեջ			
5:6-14	5:8-14	5:6-14	5:6-14	
	Իմաստությամբ քայլեր			
5:15-20	5:15-21	5:15-20	5:15-17 5:18-20	
Կանայք և ամուսիններ	Ամուսնությունը և Եկեղեցին	Քրիստոնեական ընտանիքը	Կանայք և ամուսիններ	Տան բարքերը
5:21-32	5:22-33	(5:21-6:9) 5:22-24 5:25-6:3	5:21 5:22-24 5:25-33	(5:21-6:9) 5:21-6:4

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԸ («Մուրք Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)**  
*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրք Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5:1-6:9

Ա. Եփես. 5:1-14-ը հանդիսանում է Եփես. 4:17-32-ի ընդարձակ տարբերակը: Հատվածը խոսում է Քրիստոնեական կյանքի մասին և արտահայտում, թե ինչ պետք է անեն և չանեն Քրիստոնյաները:

Բ. Եփես. 5:3-5-ը Քրիստոսի անձնվեր սիրուց անցում է կատարում համար 2-ում մեղավոր մարդկության անձնակենտրոն, աշխարհիկ սիրույն (տես՝ Եփես. 4:25-32):

Գ. Եփես. 5:8-18 հակադրում է սուտ վարդապետներին ճշմարիտ հավատացյալների հետ:

1. խավար՝ Եփես. 5:8, լույս՝ Եփես. 5:8
2. խավարի անպտուղ գործեր՝ Եփես. 5:11, լույսի պտուղը՝ Եփես. 5:9
3. խայտառակություն . . . ծածուկում՝ Եփես. 5:12, դրանք բացահայտված՝ Եփես. 5:11, 13
4. անմիտ մարդիկ՝ Եփես. 5:15, իմաստուններ՝ Եփես. 5:15
5. անմիտ՝ Եփես. 5:17, Աստծո կամքը հասկացող՝ Եփես. 5:17
6. գինով հարբել՝ Եփես. 5:18, Հոգով լցվել՝ Եփես. 5:18:

Դ. Եփես. 5:18-ի ներկա կրավորական հրամայականը՝ «լցվեցե՛ք Հոգով» սահմանվում է ներկա ժամանակի հինգ դերբայներով (տես՝ Եփես. 5:19-21): Սա ՆԿ-ում Հոգով լցվելու վերաբերյալ որոշիչ հատված է:

Ե. Պողոսը լուսաբանում է Հոգով լեցուն կյանքը և որպես օրինակ օգտագործում է Քրիստոնեական ընտանիքը: Նա գրում է՝

1. ամուսինների և կանանց մասին՝ Եփես. 5:22-31
2. ծնողների և զավակների մասին՝ Եփես. 6:1-4
3. տերերի և տնային ծառաների մասին՝ Եփես. 6:5-9:

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ԵՓԵՍԱՅԻՆԵՐԻ 5:1-2

**<sup>1</sup>Ուստի Աստծուն նմանվողներ եղեք՝ որպես սիրելի զավակներ. <sup>2</sup>Եվ սիրո մեջ քայլեցեք, ինչպես Քրիստոսն էլ մեզ սիրեց և Իր անձը մեզ համար տվեց՝ անուշահոտ պատարագ և զոհ լինելով Աստծուն:**

**5:1 «Աստծուն նմանվողներ եղեք»** Սա ներկա չեզոք (դեպոնենտ) հրամայական եղանակ է: Անգլերենի «mimic» այսինքն՝ միմիկա, բառը ծագել է հունարեն այս արմատից: Եփես. 4:32 և 5:2 համարներում Աստծուն նմանվողը սահմանվում է մի մարդ, որը՝ (1)ներում է, (2) քայլում է սիրո և անձնուրացության մեջ՝ ինչպես Հիսուսը: Այս գործողությունները միաբանություն են հաստատում և պահպանում (տես՝ Եփես. 4:2-3): Հավատացյալները պետք է պայքարեն ընդհանուր մարմնի բարիքի համար, ոչ թե անհատական իրավունքների, արտոնությունների կամ ազատությունների համար (տես՝ Եփես. 4:3):

❖ **«որպես սիրելի զավակներ»** Հավատացյալները կանչված են Հիսուսի պես աստվածաբանորեն միևնույն կարևորության տիտղոսի համար (տես՝ Եփես. 1:6): Հավատացյալներին սիրում են, քանի որ Նրան են սիրում: Նրանք պետք է արտացոլեն Հոր ընտանիքի հատկանիշները: Հիսուսը և Հոգին վերականգնում են Աստծո պատկերը մարդկության մեջ, որն ապականվեց Ծննդոց 3-ի անկման ժամանակ:

**5:2 «քայլեցե՛ք»** Սա ներկա ներգործական հրամայական է, որը կյանքի՝ ապրելակերպի համար օգտագործվող աստվածաշնչյան փոխաբերություն է (տես՝ Եփես. 4:1,17, 5:2,15): Քրիստոնեությունը սկզբնական որոշում է, որին հաջորդում է աշակերտության կյանքը: Ժամանակի մեջ դա մի կետ է, ժամանակի միջով՝ մի ընթացք, և գազաթնակետը՝ ժամանակից դուրս է: Տե՛ս Հատուկ Թեմա . Փրկության համար հունարեն բայի ժամանակաձևերը, Եփես. 1:7-ում:

❖ **«ինչպես Քրիստոսն էլ մեզ/ձեզ սիրեց»** Հնագույն հունարեն ձեռագրերը «մեզ» և «ձեզ» տարբերությունն ունեն: «Մեզ» դերանունը օգտագործում են P<sup>46</sup>, ճ<sup>a</sup>, D, G և K ձեռագրերը, իսկ «ձեզ»՝ ճ, A և B ձեռագրերը: «Ձեզ» դերանունը լավագույնս է համապատասխանում համատեքստին: Հիսուսն է մեր օրինակը (տես՝ 1 Հովի. 4:11):

❖ **«Իր անձը մեզ համար տվեց... զոհ լինելով Աստծուն»** Սա վերաբերում է Քրիստոսի փոխանորդական քալչարար մահվանը (տես՝ Եսայի 53, Մարկոս 10:45, Հռոմ. 5:8, 8:32, 2 Կորնթ. 5:21, Փիլ. 2:6-11, 1 Թեասղ. 5:9): Հունարեն *hyper* նախդիրը սեռական (բացառական) հոլովով, գրեթե հոմանիշ է հունարեն *anti* նախդիրի հետ, որը նշանակում է «փոխարեն»։ Այս արտահայտության մեջ հունարեն ձեռագրերում ավելի շատ «մեզ» դերանվան փոխարեն հանդիպում է «ձեզ»-ը՝ P<sup>46</sup>, P<sup>49</sup>, ճ, A, D, իսկ «մեզ» դերանունը միայն B ձեռագրում:

❖ **«անուշահոտ պատարագ»** Սա ՀԿ-յան փոխաբերություն է զոհը Աստծո կողմից ընդունվելու համար (տես՝ Ծննդ. 8:21, Ելից 29:18, Ղևտ. 1:9, 13, Եզեկ. 20:41, 2 Կորնթ. 2:14, Փիլ. 4:18): Երբ զոհը այրվում էր, ծուխ էր բարձրանում դեպի վեր: Այն տեսանելի տիրույթից անցնում էր դեպի անտեսանելին, ֆիզիկականից՝ դեպի Աստծո տիրույթ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍՍՑԻՆԵՐԻ 5:3-5**  
**<sup>3</sup>Բայց պոռնկություն և ամեն տեսակ պղծություն կամ ազահություն չլինի ձեր մեջ, դրանք թող անգամ չհիշատակվեն ձեր մեջ, ինչպես վայել է սրբերին, <sup>4</sup>ո՛չ էլ աղտոտ կամ հիմար խոսակցություններ, կամ խեղկատակություն, որ չի վայելում ձեզ, այլ միշտ զոհություն թող մատուցվի: <sup>5</sup>Քանի որ գիտեք, որ ոչ մի պոռնիկ, պիղծ կամ ազահ մարդ, որ կռապաշտ է, ժառանգություն չունի Քրիստոսի և Աստծո Արքայության մեջ:**

**5:3 «պոռնկություն»** Սա հունարեն (*porneia*) տերմինն է, որից ծագել է «պոռնոգրաֆիա» բառը: Նկում այն խոսում է սեռական սահմանված ուղեներիչերն անցնելու մասին: Այն կարող է վերաբերել՝

1. Սեռական անբարոյությանը (տես՝ Մատթ. 21:31-32, Մարկ. 7:21, Գործք 15:20,29)
2. շնությանը (տես՝ Մատթ. 5:32, 19:9)
3. արյունապղծությանը (տես՝ 1 Կորնթ. 5:1)
4. անառակությանը (տես՝ Հռոմ. 1:29)

ՀԿ-ում գոյություն ունեւ ցայտուն տարբերություն «շնություն» տերմինի, որտեղ մի կողմը ամուսնացած էր, և «պոռնկություն» տերմինի միջև, որը վերաբերում էր նախա-ամուսնական սեռական ակտիվությանը: Այս տարբերությունը կորում է ՆԿ-ի հունարենում, որտեղ այն վերաբերում է ցանկացած տեսակի անպատշաճ սեռական ակտի (ամուսնությունից դուրս, նախա-ամուսնական, միասեռ, թե անասնական):

❖ **«ամեն տեսակ պղծություն»** Սա հունարեն «մաքուր» տերմինն է՝ ալֆա նախածանցով, որը ժխտում է՝ բացասում է այն բառին, որին նախածանցվել է: Եփես. 5:3-ում այս երեք տերմինները՝ «պոռնկություն, պղծություն և ազահություն», բոլորն են առնչվում են (1) սուտ վարդապետների գործունեությունների հետ (տես՝ 2 Տիմ. 3:6), և / կամ (2) հեթանոսական մշակույթի հետ, որից դուրս էին եկել այս նորադարձները, որտեղ սեռական գործողությունները հաճախ ասոցացվում էին հեթանոսական պաշտամունքի հետ:

❖ **«ագահություն»** Այս տերմինը փոխանցում է «իմ համար ամեն գնով ավելի ու ավելի շատ» գաղափարը: Քանի որ այն գտնվում է սեռական մեղքերի ցանկում, հնարավոր է, որ կապ ունի եսակենտրոն սեռական շահագործման հետ (տես՝ Կող. 3:5):

❖ **«թող անգամ չհիշատակվեն ձեր մեջ»** Սա ներկա կրավորական հրամայական եղանակ է՝ ժխտական մասնիկով, որը սովորաբար նշանակում է ընթացքի մեջ գտնվող գործողությունը դադարեցնել: Այս մեղքերը տեղի էին ունենում եկեղեցում: Հավատացյալները պետք է հսկեն մեղքերի դեմ, և դրանց հետ կապված բամբասանքների՝ կասկածների դեմ (տես՝ 1 Թեսաղ. 5:22): Մենք պետք է օրինակ ծառայենք, ինչպես նաև խոսենք Ավետարանը:

❖ **«ինչպես վայել է սրբերին»** Սա «որը չի վայելում ձեզ» խոսքի համագործն է, որը գրված է Եփես. 5:4-ում: Տես՝ Հատուկ Թեմա. Սրբեր, Կող. 1:2-ում:

**5:4** Հավատացյալները պետք է զգույշ լինեն իրենց խոսքի համար: Այն հայտնում է, թե իրականում ով են իրենք (տես՝ Մարկ. 7:15, 18-23, Կող. 3:18, Եփես. 4:19, Հակ. 3:1-12): Տես՝ Հատուկ Թեմա Կող. 3:8-ում: Սա 5-րդ գլխում նշված մեղքերի երկրորդ ցանկն է: Երկու խմբերն էլ ունեն երեք տարր: Սա նման է 4:17-32-ին:

❖ **«այլ միշտ գոհություն թող մատուցվի»** Ճշմարիտ հավատացյալները բացահայտվում են իրենց գոհունակ սրտով, որը կապված չէ հանգամանքներից (տես՝ Եփես. 5:20, Կող. 3:17, 1 Թեսաղ. 5:18): Տես՝ Հատուկ Թեմա. Գոհություն, Կող. 4:2-ում:

**5:5 «Քանի որ /հաստատ/ գիտեք»** Սա շատ ընդգծված արտահայտություն է: Այն ունի հունարենի երկու «իմանալ» բայի երկու ձևերը՝ (1) վաղակատար ներգործական սահմանական կամ հրամայական եղանակի ձև՝ *oida* և (2) Ներկա ներգործական դերբայի ձևը՝ *gnōskō*: Սուտ մարգարեները պնդում էին, որ Աստծո մասին ունեն կատարյալ, ծածուկ գիտություն, սակայն հավատացյալները պետք է հասկանան, որ անձի ապրելակերպն է հայտնում իրական գիտությունն ու իմաստությունը (տես՝ Մատթեոս 7):

❖ **«ոչ մի պոռնիկ, պիղծ կամ ագահ մարդ»** Բոլոր այս տերմինները կրկնվում են Եփես. 5:3-ից՝ «պոռնիկ» (*porneia*): Սա Եփես. 5:3-ում նշված տերմինի արական սեռն է, հավանաբար սա անդրադառնում է տղամարդ պոռնիկներին, սողոմականներին կամ սուտ մարգարեների սեռական գործունեություններին:

❖ **«որ կռապաշտ է»** Համագործ խոսքը գտնվում է Կող. 3:5-ում: Նմանատիպ սահմանում կարող եք գտնել 1 Հովի. 5:21-ում: Երբ սեռական ակտը դառնում է մեր կյանքերի կարևորագույն նպատակը, այն դառնում է մեր աստվածը: Երբ փողը դառնում է մեր կյանքերի կարևորագույն նպատակը, այն նույնպես դառնում է կռապաշտություն (տես՝ Մատթ. 6:24): Որոշ մեկնաբաններ այս արտահայտությունը դիտարկում են որպես թե համատեքստում նշված բոլոր մեղքերին վերաբերող (Եփես. 5:3-5):

❖ **«ժառանգություն չունի»** Հավատացյալների կյանքերը ցույց են տալիս, թե ով է նրանց հայրը՝ Աստված, թե՞ չարը (տես՝ Մատթ. 7, 1 Հովի. 3:6,9):

❖ **«Քրիստոսի և Աստծո Արքայության մեջ»** Քերականական կառուցվածքը և սեռական հոդը կապում է Քրիստոսին և Աստծուն իրար որպես մեկ (տես՝ Դուկ. 22:29, Կող. 1:13): Սա ՆԿ-յան հեղինակների կողմից Քրիստոսի աստվածությունը հաստատելու կերպերից մեկն է:

«Արքայությունը» Հիսուսի քարոզչության մեջ ընթացիկ և կենտրոնական թեմա էր: Այն վերաբերում է այժմ մարդկանց սրտերում Աստծո տիրակալությանը, որը հետագայում մի օր

տարածվելու է ամբողջ աշխարհով մեկ (տես՝ Մատթ. 6:10): Մի օր բոլոր մարդիկ և հրեշտակները ընդունելու են Քրիստոսին որպես Տեր (տես՝ Փիլ. 2:10-11), սակայն միայն այն մարդիկ, ովքեր ապաշխարել են և հավատացել ավետարանին, կկազմեն Նրա հավատենական թագավորության մասը (Դան. 7:13, 1 Կորնթ. 15:27-28):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ**  
**SPECIAL TOPIC: THE KINGDOM OF GOD**

ՀԿ-ում ՅԱՀՎԵՆ (YHWH) համարվում էր Իսրայելի Թագավոր (տես՝ 1 Թագ. 8:7; Սաղ. 10:16; 24:7-9; 29:10; 44:4; 89:18; 95:3; Ես. 43:15; 44:4,6), իսկ Մեսիան՝ իդեալական թագավոր (տես՝ Սաղ. 2:6; Ես. 9:6-7; 11:1-5): Բերթեհեմում Հիսուսի ծննդամբ (մ.թ.ա. 6-4) Աստծո Թագավորությունը նոր իշխանությամբ և փրկությամբ (նոր ուխտ, տես՝ Երեմ. 31:31-34; Եզեկ. 36:27-36) մուտք գործեց մարդկության պատմություն: Հովհաննես Սկրիպչը հռչակում էր այդ թագավորության մտապուտ լինելը (տես՝ Մատթ. 3:2; Մարկ. 1:15): Հիսուսը պարզ սովորեցնում էր, որ Թագավորությունը Իր և Իր ուսմունքի մեջ է (տես՝ Մատթ. 4:17,23; 9:35; 10:7; 11:11-12; 12:28; 16:19; Մարկ. 12:34; Դուկ. 10:9,11; 11:20; 12:31-32; 16:16; 17:21): Մինչդեռ այդ Թագավորությունը նաև ապագա Թագավորություն է (տես՝ Մատթ. 16:28; 24:14; 26:29; Մարկ. 9:1; Դուկ. 21:31; 22:16,18):

Մարկոսի և Դուկասի Մինուպտիկ գուգահեռների մեջ հանդիպում ենք «Աստծո Թագավորություն» արտահայտությունը: Հիսուսի ուսմունքների մեջ մեծ տարածում գտած այս թեման բովանդակում է Աստծո մարդկանց սրտերում տիրելու իմաստը, որը մի օր կտարածվի ամբողջ աշխարհով մեկ: Սա արտացոլվում է Մատթ. 6:10-ում Հիսուսի աղոթքի մեջ: Մատթեոսը, գրելով հրեաներին, նախընտրել է մի արտահայտություն, որտեղ չի գործածվում Աստծո անունը (Երկնքի Արքայություն), մինչդեռ Մարկոսն ու Դուկասը՝ գրելով հեթանոսներին, կիրառել են տարածված անվանումը՝ օգտագործելով աստվածության անունը:

Սա կարևոր արտահայտություն է Մինուպտիկ՝ համանման Ավետարաններում: Հիսուսի առաջին և վերջին քարոզները և Նրա առակների մեծամասնությունը գործ ունեին այս թեմայի հետ: Այժմ այն վերաբերում է Աստծո մարդկանց սրտերում թագավորելուն: Չարմանալի է, որ Հովհաննեսը այս արտահայտությունը գործածում է միայն երկու անգամ (և երբեք չի գործածում Հիսուսի առակների մեջ): Հովհաննեսի Ավետարանում «հավիտենական կյանք» խոսքն է բանալի փոխաբերությունը:

Այս արտահայտության հետ կապված լարվածություն է ստեղծվում Հիսուսի երկու գալստյան պատճառով: ՀԿ-ը կենտրոնանում է միայն Աստծո Մեսիայի մի գալստյան վրա՝ ռազմական, դատաստանի, փառավոր գալստյան, սակայն ՆԿ-ը ցույց է տալիս, որ Նա առաջին անգամ եկավ որպես Եսայի 53-ի Չարչարված Ծառան և Չաք. 9:9-ի խոնարհ Թագավորը: Երկու հրեական դարաշրջանները՝ ամբարշտության դարաշրջանը և արդարության նոր դարաշրջանը, մասամբ համընկնում են: Հիսուսը ներկայումս տիրում է հավատացյալների սրտերում, սակայն մի օր տիրելու է ամբողջ ստեղծագործության վրա: Նա վերադառնալու է ՀԿ-ի կանխատեսության համաձայն: Հավատացյալները ապրում են Աստծո Թագավորության «ներկայում» ի հակադրություն դրա «ապագայի» (տես՝ Գորդն Դ. Ֆիի և Դուգլաս Ստյուարտի *Ինչպես կարդալ Աստվածաշունչը Իր Ամբողջ Իմաստով*, էջ՝ 131-134 /Gordon D. Fee and Douglas Stuart's *How to Read The Bible For All Its Worth*):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՉԱՐՉԱՐՎՈՂ ՄԵՍԻԱ**

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՅՍ ԵՎ ԳԱԼԻԹ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՉԱՆՆԵՐԸ**

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 5:6-14**

<sup>6</sup>Թող ոչ որ դատարկ խոսքերով ձեզ չխաբի, որովհետև սրանց պատճառով է, որ Աստծո բարկությունը գալիս է անհնազանդության որդիների վրա: <sup>7</sup>Ուրեմն՝ նրանց մասնակից մի՛ եղեք, <sup>8</sup>որովհետև թեև մի ժամանակ խավար էիք, բայց հիմա լույս եք Տիրոջ մեջ: Քայլեցե՛ք որպես լույսի որդիներ <sup>9</sup>(քանի որ Հոգու պտուղը բարություն, արդարություն ու ճշմարտություն է) <sup>10</sup>ստուգելով, թե Տիրոջն ինչն է ընդունելի: <sup>11</sup>Խավարի անպտուղ գործերին մասնակից մի՛ եղեք, ընդհակառակը՝ հանդիմանե՛ք դրանց, <sup>12</sup>նրանց մեջ գաղտնաբար գործված արարքների մասին խոսելն իսկ ամոթ է: <sup>13</sup>Բայց ամեն ինչ, որ լույսից է հանդիմանվում, բացահայտվում է, քանի որ բացահայտողը լույսն է: <sup>14</sup>Դրա համար էլ ասում է. «Արթնացի՛ր, ո՛վ քնած, և կանգնի՛ր մեռելների միջից, ու Քրիստոսը պիտի լուսավորի քեզ»:

**5:6 «Թող ոչ որ ձեզ չխաբի»** Սա ներկա ներգործական հրամայական է՝ բացասական մասնիկով, որը սովորաբար նշանակում է ընթացքի մեջ գործողությունը դադարեցնել: Սա վերաբերում էր սուտ վարդապետների պատգամին և կյանքին, որոնք ազատամիտ գնոստիկների և օրինապաշտ հրեաների խառնուրդ էին (որը շատ անհամատեղելի է թվում): Այնքան բան կո, որ մենք՝ ժամանակակիցներս չգիտենք առաջին դարի հերետիկոսների մասին:

❖ **«դատարկ խոսքերով»** Սա կարող է վերաբերել ազատամիտների կամ գնոստիկների ուսմունքներին, որ սեռական մեղքերը չեն ազդում հոգևոր կյանքի վրա: Նրանց համար փրկությունը հրեշտակային կարգերի վերաբերյալ ծածուկ գիտության մեջ էր: Նրանք ամբողջովին առանձնացնում էին արդարացումը սրբացումից: Այս հերետիկոսությունը դեռևս գործում է աշխարհում:

❖ **«Աստծո բարկությունը գալիս է»** Սա Ներկա ժամանակ է: Այն վերաբերում է կամ (1) ժամանակավոր դատաստանին (տես՝ Հովհ. 3:36, Հռոմ. 1:18-32, 2:8-9, 9:22, Կող. 3:6, 1 Թեսաղ. 2:16), և / կամ (2) ապագայի վախճանաբանական դատաստանին (տես՝ Մատթ. 25:31բ, Հռոմ. 5:9, 1 Թեսաղ. 1:10, 5:9): Աստծո բարկությունը այնքան բացահայտ է, որքան և Նրա սերը:

Մինչ Աստծո բարկության այս թեման է, թույլ տվեք հստակեցնել իմ հասկացողությունը այս առնչությամբ: Առաջին հերթին, այս ճշմարտության չափից ավելի շեշտադրումը կամ թերի շեշտադրումը կհանգեցնի աստվածաբանական ողբերգության: Աստված բարկացած է այն բանի վրա, թե ինչպես է մարդկությունը վարվում Իր Խոսքի, Իր աշխարհի, Իր կամքի հետ, և միմյանց հանդեպ: Սա այն աշխարհը չէ, որ Աստված ուզում էր տեսնել: Բոլոր մարդիկ հաշիվ են տալու Աստծուն այն բանի համար, թե ինչպես են ապրել իրենց կյանքը (տես՝ Գաղ. 6:7, 2 Կորնթ. 5:10): Սակայն կարևոր է գիտակցել աստվածաշնչյան տեսակետն այս վարդապետության հարցում: 2 Օրինաց 5:9 համեմատելով 5:10-ի և 7:9-ի հետ, ձևավորում է մի բանաձև: Մինչ դատաստանը հասնում է մինչև երրորդ և չորրորդ սերունդներին, Աստծո սերն ու հավատարմությունը հասնում է մինչև հազարերորդ սերունդներին: Եսայի 28:21-ում դատաստանը կոչվում է Աստծո «տարօրինակ/ օտարոտի» գործ (տես՝ Ողբ 3:32-33, Սաղմ. 103:8-14): Դատաստանը անհրաժեշտություն է բարոյական տիեզերքում, սակայն Աստծուն տհաճ է: Դժողքը մի բաց արնահոսող վերք է Աստծո սրտում, որը երբեք չի բուժվելու: Նա սիրում է բոլոր մարդկանց, որոնց Իր պատկերով է ստեղծել (տես՝ Ծննդ. 1:26-27, 5:1, 9:6): Նա ցանկանում է բոլորին փրկել և խոստացել է փրկել բոլոր նրանց, ովքեր կապաշխարեն ու կհավատան Իր Որդուն (տես՝ Ծննդ. 3:15, Եզեկ. 18:23, 32, 1 Տիմ. 2:4, 2 Պետ. 3:9):

❖ **«անհնազանդության որդիները»** Սա եբրայերեն դարձվածք է (տես՝ Եփես. 2:2, Կող. 3:6): Ուխտի հնազանդությունը Աստծո զավակներին բնորոշ հատկություն է: Անհնազանդությունը բնորոշում է Մատանայի հետևորդներին:

**5:7 «նրանց մասնակից մի՛ եղեք»** Սա բառացի նշանակում է «համասեփականատեր»: Այն ներկա ժամանակի հրամայական եղանակ է՝ ժխտական մասնիկով, որը սովորաբար նշանակում է արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող գործողության դադարեցում: Պողոսն այստեղ կիրառում է *syn*-ի հետ կազմված բաղադրյալ բառ, ինչպես նա արեց Եփես. 2:5-6 և 3:6-ում: Այս նույն արտահայտությունը կրկնվում է համար 11-ում: Ոչ միայն հավատացյալները պետք է փախնեն մեղքի ծուղակից՝ գայթակղությունից կամ նույնիսկ մեղքի երևույթից, այլ պետք է զգուշորեն ընտրեն իրենց ընկերներին և գործընկերներին: Մեր ընտրած մտերիմ ընկերները հայտնում են մեր սրտերը, ինչպես մեր բերանից դուրս եկած խոսքերը:

**5:8-9 «խավար... լույս»** Սա շատ նման է Հովհաննեսի դուլալիզմին (տես՝ Եփես. 1:4-5, 7-8, 3:19, 8:12, 9:5, 12:46): Այս հակադիր տերմինները հանդիսանում են բարու և չարի տիեզերական խորհրդանիշները, որոնք կիրառվել են նախքան հունական փիլիսոփայությունը և տարածված են եղել Մեդյալ Ծովի Գալարների գրականության մեջ, որը հրեական անջատողական անապատային համայնք էր:

Առաջին արտահայտության մեջ անկատար ներգործական բայը նկարագրում է նրանց նախկին կյանքը որպես մշտապես մեղանշելու՝ մեղքի կյանք (տես՝ Ծննդ. 6:5, 11-12, 8:21, Սաղմ. 14:3, 58:3, Երեմ. 12:9):

**5:8 «բայց հիմա լույս եք Տիրոջ մեջ»** Ինչպիսի՛ խիստ հակադրություն (տես՝ Մատթ. 5:19, Հովհ. 8:12):

❖ **«բայլեցե՛ք որպես լույսի որդիներ»** Սա ևս մեկ ներկա ներգործական հրամայական է (տես՝ Հովհ. 3:19-21, 1 Հովհ. 1:7): Հավատացյալների խոսքերը, կյանքերը և առաջնայնությունները հայտնում են, թե ով են իրենք:

❖ **«որդիներ»** Սա հրեական դարձվածք է «առանձնահատկությունների» վերաբերյալ, ինչպես որ «գավակները, որդիները» Եփես. 5:6-ում: Մարդու փոխված կյանքը ապացույցն է նրա դարձի: Սա արտահայտվում է Եփես. 5:9-ում: Չկա պտուղ, չկա նաև արմատ (տես՝ Մատթ. 5-7, Հակոբոս և 1 Հովհաննես):

**5:9 «լույսի պտուղ»** KJV թարգմանությունը /ինչպես նաև հայերեն թարգմանությունը/ տալիս է «Հոգու պտուղը», որը կարելի է գտնել հնագույն հունարեն P<sup>46</sup>, D<sup>c</sup> և I ձեռագրերում: Սակայն P<sup>49</sup>, 8, A, B, D, G, P ձեռագրերը և անմիջական համատեքստը (Եփես. 5:8) պահանջում են «լույսի պտուղը» խոսքը: Անգամ NKJV արձանագրում է այսպես: KJV հետևում է արևմտյան ընտանիքի հունարեն ձեռագրերին, որոնք խոսքերը որդեգրել են Գաղ. 5:22-ից:

❖ **«արդարություն»** Տե՛ս Հատուկ Թեմա Եփես. 4:24-ում:

**5:10**

**NASB**  
**NKJV**  
**NRSV**  
**TEV**  
**NJB**

**«փորձելով սովորել»**  
**«ստուգելով»**  
**«փորձելով գտնել»**  
**«փորձեք սովորել»**  
**«փորձեք հայտնաբերել»**

Հունարեն այս տերմինը (*dokimazō*) «ապացուցել, ստուգել» (տես՝ Հռոմ. 12:2, 2 Կորնթ. 8:8, 22, 13:5, Գաղ. 6:4, 1 Թեսաղ. 5:21, 1 Տիմ. 8:10, Եբր. 3:9) կամ «փորձել» (տես՝ 1 Կորնթ. 3:13, 1 Թեսաղ. 2:4, 1 Պետ. 1:7, 1 Հովհ. 4:1) ունեն «արդարացնելու նպատակով ստուգելու» իմաստը: Սա մետալուրգիական տերմին էր, որով ստուգում էին մետաղադրամների իսկությունը: Տե՛ս Հատուկ Թեմա Փիլ. 2:22-ում:

**5:11 «մասնակից մի՛ եղեք»** Բառացի սա «հաղորդակից» է նշանակում: Սա ևս մեկ *syn* բաղադրյալ է: Սա ներկա ժամանակի ներգործական սեռի հրամայական եղանակ է՝ ժխտական մասնիկով, որը սովորաբար նշանակում է արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող գործողության դադարեցում:

Սա վերաբերում է՝

1. մտերմիկ սոցիալական կապին
2. հեթանոսական պաշտամունքային միջավայրին
3. սուտ վարդապետների ժողովներին (տես՝ Եփես. 5:12):

❖ **«հանդիմանե՛ք դրանց»** Սա ևս մեկ ներկա ժամանակի ներգործական սեռի հրամայական եղանակ է: Ինչպե՛ս են հավատացյալները հանդիմանում՝ բացահայտում չարը: Եփես. 5:12-ի շնորհիվ այս արտահայտությունը կարծես թե նշանակում է «հանդիմանել մեր սեփական աստվածահաճո կյանքերով» կամ ավետարանի քարոզչության միջոցով: Լույսը չի կարող խավարի հետ համատեղվել (տես՝ Հովհ. 3:17-19):

**5:14 «Արթնացի՛ր, ով քնած է... Քրիստոսը պիտի լուսավորի քեզ»** Սա կա՛մ թեթև ակնարկ է Եսայի 29:19-ից կա՛մ հավանաբար 51:17, 52:1, 60:1-ից, կա՛մ էլ առաջին եկեղեցու Քրիստոնեական օրհներգերից է (տես՝ Փիլ. 2:6-11, 1 Տիմ. 3:16, 2 Տիմ. 2:11-13): Պողոսը կիրառում էր քնարերգական նյութեր՝

1. ՀԿ-ից (մի քանի թարգմանություններից)
2. Քրիստոնեական երգերից
3. Քրիստոնեական հավատո հանգանակներից
4. նույնիսկ հեթանոս գրողներից

❖ **«քնած... մեռելներ»** Սա վերաբերում է անհավատների հոգևոր կուրությանն ու մեռած վիճակին (տես՝ Եփես. 2:1, 2 Կորնթ. 4:4):

❖ **«Քրիստոսը պիտի լուսավորի քեզ»** Այստեղ Հիսուսը նկարագրված է որպես փառավորված առավոտյան աստղը (տես՝ Ես. 9:1-2, 59:8, 60:1, Ղուկ. 1:78-79), Արյուսակի հակառակը (տես՝ Ես. 14:12): Լույսը բժշկության, առողջության, նշմարտության, գիտության և բարության հնագույն խորհրդանիշն է (տես՝ Մաղ. 4:2):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍՍՑԻՆԵՐԻ 5:15-21**

<sup>15</sup>Ուստի նայեցե՛ք, որ զգուշությամբ քայլեք, ոչ թե անմիտների նման, այլ՝ իմաստունների, <sup>16</sup>ժամանակը ծախո՛ւ առեք, որովհետև օրերը չար են: <sup>17</sup>Դրա համար էլ անմիտ մի՛ եղեք, այլ իմացեք, թե ինչ է Տիրոջ կամքը: <sup>18</sup>Եվ մի՛ հարբեք գինով, որի մեջ չափն անցկացնել կա, այլ լցվեցե՛ք Հոգով, <sup>19</sup>միմյանց հետ խոսելով սաղմոսներով ու օրհնություններով և հոգևոր երգերով, ձեր սրտերում երգեցե՛ք և սաղմոս ասե՛ք Տիրոջը, <sup>20</sup>ամեն ժամանակ, ամեն բանի համար շնորհակալություն հայտնելով Աստծուն և Հորը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով, <sup>21</sup>իրար հնազանդ եղեք Աստծո վախով:

**5:15 «զգուշությամբ քայլեք»** Սա ներկա ներգործական սահմանական եղանակ է, և ոչ թե ևս մեկ ներկա ներգործական հրամայական: Այն փաստ է սահմանում, ոչ թե հրաման: «Քայլե՛ք» բառը աստվածաշնչյան փոխաբերություն է, որը կիրառվում է ապրելակերպի՝ կյանքի համար (տես՝ Եփես. 4:1, 17, 5:2):

❖ **«ոչ թե անմիտների նման»** Իմաստությունը հայտնվում է աստվածահաճո կյանքում (տես՝ Կող. 4:5), ոչ թե սուտ վարդապետների գիտության կամ անաստված ազատության մեջ:

**5:16 «ժամանակը ծախու առե՛ք»** Սա Ներկա չեզոք դերբայ է: Սա առևտրային տերմին է, որը նշանակում է «գնել կատարյալ մի բան»՝ ճիշտ ժամանակին կամ լավ գնով: Հավատացյալները պետք է տրված յուրաքանչյուր հոգևոր հնարավորությունից օգտվեն (տես՝ Կող. 4:2-6, 1 Պետ. 3:15), քանի որ մենք գիտենք, որ գիշերը մոտ է, երբ այլևս ոչ ոք չի կարող աշխատել: Ժամանակի մեջ Ավետարանի համար մի բաց պատուհան կա: Մենք պետք է այդ պահը որսանք:

**5:17 «անմիտ մի՛ եղեք»** Սա ներկա ժամանակի չեզոք (դեպոնենտ) հրամայական է՝ ժխտական մասնիկով, որը սովորաբար նշանակում է ընթացքի մեջ գտնվող գործողության դադարեցում: Նրանք անմիտ վիճակում էին:

❖ **«Տիրոջ կամքը»** Իրականում «կամք» բառի հետ որոշիչ հոդ չկա: Ուստի սա Աստծո մի կամքն է: Աստծո կամքը այն է, որ վստահենք Քրիստոսին (տես՝ Հովհ. 6:29, 40), դրանից հետո կան մի քանի «կամքեր» հավատացյալների համար: Տե՛ս Հատուկ Թեմա . Աստծո կամքը, Եփես. 1:9-ում:



**5:18 «մի՛ հարբեք»** Սա ներկա կրավորական հրամայական է՝ ժխտական մասնիկով, որը սովորաբար նշանակում է ընթացքի մեջ գտնվող գործողության դադարեցում (տես՝ Առակ.23:30-31): Այկոհոլային խմիչքը և թմրադեղերը հաճախ օգտագործվում են կրոնական փորձառություններին նպաստելու՝ խթանելու համար: Դրանք նաև մարդու կյանքը վերահսկող և բնորոշող մի ինչ-որ բանի օրինակներ են, որոնք իհարկե արդյունք (կախվածություն) գրանցելու համար դիտավորյալ կերպով կրկնվում են: Ինչպես որ այկոհոլային խմիչք խմելը պետք է արդյունքի համար կրկնվի, այնպես էլ Սուրբ Հոգով «լցվելն» է կրկնվում արդյունք ունենալու համար: Ինչպես որ հավատացյալները փրկության համար հոժարակամ ընդունում են Քրիստոսին, այնպես էլ պետք է հոժարակամ և պարբերաբար (ներկա կրավորական) իրենց անձեր բացեն Հոգու շարունակական (ամենօրյա) առաջնորդության և վերահսկողության համար:

❖ **«լցվեցե՛ք Հոգով»** Սա ներկա կրավորական հրամայական է, որը նշանակում է «դուք պետք է շարունակեք Հոգով լցվել» կամ «անընդհատ լցվեցե՛ք Հոգով»: Սա հրաման է, ոչ թե ընտրության տարբերակ: Սա բոլոր հավատացյալների համար նորմալ վիճակ է, ոչ թե բացառություն: Այս արտահայտությունը ենթադրում է, որ հավատացյալները պետք է հասանելի, զգայուն և հնազանդ լինեն իրենց ամենօրյա կյանքում Հոգու կողմից Քրիստոսին ձևավորելու հարցում (տես՝ Հռոմ . 8:28-29, Գաղ. 4:19, Եփես. 1:4, 2:10, 4:13, Կող. 1:28): Հավատացյալները չեն կարող իրենք իրենց լցնել, այլ պետք է թույլ տան Հոգուն ազատություն և ազդեցություն ունենալու: Մարդկային գործերը չեն հանդիսանում արդյունավետ կյանքի բանալին, այլ Հոգին (տես՝ Գաղ. 3:1-3): Սակայն հավատացյալները պետք է հոժարակամ բացեն իրենց անձերը Հոգու առաջնորդության և վերահսկողության համար, այն էլ մշատապես:

«Լցվեցեք» տերմինը հաճախ ՆԿ-ում կիրառվում է այն բանի համար, որը մոտիվացնում և բնութագրում է մարդու կյանքը: Հավատացյալները ընտրություն ունեն, թե ինչով լցնեն իրենց կյանքը: Գործքում Հոգով «լցված» լինելը ասոցացվում է ավետարանչության հետ: Պետրոսը Գործք 2:4, 4:8, 31-ում մի քանի անգամ «լցվում» է Հոգով: Լեցունությունը շարունակական կարիք և փորձառություն է:

Կող.3:16-ում առկա կառուցվածքային զուգահեռը՝ համագործ (Կողոսացիներն ու Եփեսացիները հիմնված են գրեթե միևնույն ուրվագծի վրա) փոխում է «լցվեցե՛ք Հոգով» խոսքը «թող Քրիստոսի Խոսքը ձեր մեջ բնակվի առատապես»: Երկուսն էլ վերաբերում են ամենօրյա մտադրված հնազանդությանը Հոգու կողմից Քրիստոսակերպություն վերարտադրելու հարցում, մասնավորապես երբ այն վերաբերում է մարդկանց հետ շփումներին: Հիսուսը մահացավ մարդկանց համար: Մարդիկ առաջնայնություն են, մարդիկ հավիտենական են:

**5:19 «խոսելով . . . երգելով . . . սաղմոս ասելով»** Սրանք չորս ներկա ներգործական դերբայներից առաջին երեքն են, որոնք նկարագրում են Հոգով լեցուն կյանքը: Առաջին երեքը կապված են երգելու կամ Սաղմոսներ մեջբերելու հետ: Հոգին Աստծուն երեգելու համար հավատացյալների սրտերի մեջ երգ է դրել (տես՝ Կող. 3:16): Աստծուն ուղղված փառաբանությունները ճեղքում են բերում:

Այս համարը օգտակար է եկեղեցում տարբեր երաժշտական նախասիրությունների հետ աշխատելիս: Ուշադրություն դարձրեք թվարկված զանազան երաժշտական կատեգորիաները: Երկրպագության երաժշտությունը անձնական ճաշակի հարց է, ոչ թե մեկը ճիշտ է, իսկ մյուսն ընդհակառակը՝ անպատշաճ: Դա սրտի դիրք է, ոչ թե ականջի: Կարևորը արտահայտված աստվածաբանությունն է, իսկ երաժշտության ոճը միշտ երկրորդական է: Մի՛ համարձակվեք վնասել Աստծո եկեղեցին անձնական նախասիրությունների պատճառով: Երկրպագությունը սրտի արտահայտման ձև է, ոչ թե երաժշտական ռիթմերի: Խնդրում են նորից ու նորից կարդացե՛ք Հռոմ . 14:1-14:3-ը:

❖ **«սիրտ»** Տե՛ս Հատուկ Թեմա Կող. 2:2-ում:

**5:20 «ամեն ժամանակ շնորհակալություն հայտնելով»** Սա չորրորդ ներկա ներգործական դերբայն է: Գոհունակությունը Սուրբ Հոգով լեցուն կյանքի ևս մեկ ապացույց է (տես՝ Եփես. 5:4, Փիլ. 4:6, 1 Թեսաղ. 5:18): Սա աստվածաշնչյան աշխարհայացք է, որով հավատացյալները կարող են

«ամեն ինչում» գոհանալ (տես՝ Հոռմ . 8:29-30): Հոգով լեցուն հավատացյալները գիտեն, որ Աստված իրենց կողմից է և որ հանգամանքները չեն հանդիսանում ուրախության և խաղաղության աղբյուր: Իմ կյանքի այս բնագավառում մի գիրք, որը շատ օգտակար է եղել Հաննա Ուայթոլլ Սմիթի *Քրիստոնյայի Երջանիկ Կյանքի Գաղտնիքը* գիրքն է (Hannah Whitall Smith's *The Christian's Secret of a Happy Life*): Տե՛ս Հատուկ Թեմա . Պողոսի փառաբանությունը, աղոթքը և գոհունակությունը, Եփես . 3:20-ում:

**5:21**

**NASB, NRSV  
NKJV  
TEV  
NJB**

**«հնազանդ եղեք»  
«հնազանդելով»  
«ձեզ հնազանդեցրե՛ք»  
«տեղ տվեք»**

Սա ներկա չեզոք կամ կրավորական դերբայ է (տես՝ 5:22): Այն անցում է հանդիսանում Եփես . 5:1-20-ից դեպի 22-21 հատվածը, և համատեքստը շարունակվում է մինչև 6:9-ը: Այս հինգ դերբայները սահմանում են, թե ինչ է նշանակում Հոգով լցվել: Համազոր հատվածը, որը գտնվում է Կող . 3:16-ում, ցույց է տալիս, որ այն վերաբերում է ամենօրյա Քրիստոսակերպությանը:

Մեր օրերում «հնազանդությունը» բացասական, սեռային տերմին է: Ի սկզբանե այն եղել է ռազմական տերմին, որը վերաբերում էր հրամանների շարքի վրա հիմնված հնազանդությանը: Սակայն ՆԿ-ում այն հաճախ կիրառվում է Հիսուսի Իր երկրավոր ծնողների (Ղուկ . 2:51) և Իր երկնային Հոր հանդեպ (1 Կորնթ . 15:28) ցուցաբերած վերաբերմունքը նկարագրելու համար: Պողոսը շատ է սիրել այս տերմինը և կիրառել է 23 անգամ: Համար 21-ը հավատացյալների միջև Հոգով լեցուն կյանքի հետ կապված փոխադարձ հնազանդության տիեզերական հոգևոր սկզբունք է: Հնազանդությունը հակառակ է մեր մշակութային, արևմտյան, անհատապաշտ մտայնությանը: Եսասիրությունն ու գերիշխելու ցանկությունը այնքան խորն են արմատացել մեր մշակութային մեջ, սակայն աստվածաշնչորեն այնքան անպատշաճ են (տես՝ Հոռմ . 12:10 . Գաղ . 5:13, Փիլ . 2:3, 1 Հովի . 4:11):

Այս համարը շեշտադրում է բոլոր հավատացյալների կողմից փոխադարձ հնազանդությունը: Պետք է վերահաստատել, որ այս կոնտեքստը (Եփես . 5:22-31) գործ ունի Քրիստոնյա ամուսինների և Քրիստոնյա կանանց միջև ընտանեկան փոխհարաբերությունների հետ, ոչ թե ընդհանուր առմամբ տղամարդկանց ու կանանց հետ: Կանայք հոգևորապես ոչ մի առումով ստորադաս չեն տղամարդկանցից (տես՝ Գործք 2:16-21, Գաղ . 3:28):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ  
SPECIAL TOPIC: SUBMISSION (*hupotassō*)**

Սեպտուագիհնտան այս տերմինը գործածում է թարգմանելու տաս տարբեր երբայերեն բառեր: Երբայերենում այս բառի հիմնական նշանակությունն էր «կարգադրել» կամ «հրամանի իրավունք»: Սա վերցված է Սեպտուագիհնտայից (LXX):

1. Աստված հրամայում է (տես՝ Ղևտ . 10:1, Հովնան 2:1, 4:6-8)
2. Մովսեսը հրամայում է (տես՝ Ելից . 36:6, 2 Օրինաց 27:1)
3. թագավորները հրամայում են (տես՝ 2 Մնաց . 31:13)

ՆԿ-ում այդ նշանակությունը շարունակվում է որպես Գործք 10:48-ում Առաքյալի «հնազանդության» պատվիրաններ: Ինչևէ, ՆԿ-ում նոր նշանակություններ են զարգանում:

1. զարգանում է կամայական կողմը (հաճախ ՉԵՉՈՔ ՄԵՌՈՎ)
2. այս ինքնասահմանափակ գործողությունը կարելի է տեսնել Հիսուսի հնազանդության մեջ ա . Հորը (տես՝ 1 Կորնթ . 15:25)  
բ . Իր երկրավոր ծնողներին (տես՝ Ղուկ . 2:51)

3. հավատացյալները հնազանդում են մշակույթի ասպեկտներում, որպեսզի ավետարանը հակառակ ազդեցություն չթողնի՝

ա. այլ հավատացյալների վրա (տես՝ Եփես. 5:21)

բ. հավատացյալ կանանց վրա (տես՝ Կող. 3:18, Եփես. 5:22-24, Տիտոս 2:5, 1 Պետ. 3:1)

գ. հավատացյալները հեթանոս կառավարության վրա (տես՝ Հռոմ. 13:1-7, 1 Պետ. 2:13)

Հավատացյալների գործողությունների շարժառիթը սերն է՝ հանուն Աստծո, հանուն Քրիստոսի, հանուն Արքայության, հանուն ուրիշների բարօրության:

Եկեղեցին այս տերմինը *agapao* (սեր) պես լցրեց նոր նշանակությամբ՝ Արքայության և ուրիշների կարիքների հիման վրա: Այս տերմինը ստանում է անձնուրացության մի նոր ազնվական հատկանիշ, որը հիմնված չէ հրամանի՝ պատվիրանի վրա, այլ անձնվեր Աստծո և Իր Մեսիայի միջև նոր փոխհարաբերության վրա: Հավատացյալները հնազանդում են և ենթարկվում ընդհանուր բարօրության և Աստծո ընտանիքի օրհնության համար:

## ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏՎԱԾԱՃՆՉԻ ԿԱՆԱՅՔ

### SPECIAL TOPIC: WOMEN IN THE BIBLE

#### I. Հին Կտակարանը (ՀՄԱ մշակույթը)

Ա. Մշակույթը կանայք համարվում էին ունեցվածք՝

1. Ներառված էին ունեցվածքի ցանկում (Ելից 20:17)

2. Ստրուկ կանանց հանդեպ վերաբերմունքը (Ելից 21:7-11)

3. Կանանց ուխտերը անվավեր էին դարձվում սոցիալապես պատասխանատու տղամարդու կողմից (Ելից 30)

4. Կանայք որպես պատերազմի ավար (2 Օր.20:10-14; 21:10-14)

Բ. Իրականում գոյություն ունեւ հավասարություն

1. Արու և էգ ստեղծված էին Աստծո պատկերով (Ծննդ.1:26-27)

2. Պատվիր քո հորն ու մորը (Ելից 20:12; [2 Օր.5:16])

3. Հարգանք մոր և հոր հանդեպ (Ղևտ.19:3; 20:9)

4. Տղամարդիկ և կանայք կարող են լինել Ուխտավորներ (Թվոց 6:1-2)

5. Դուստրերը ունեն ժառանգության իրավունք (Թվոց 27:1-11)

6. Ուխտի ժողովրդի մի մասն են (2 Օր.29:10-12)

7. Հոր և մոր խրատին լսելը (Առակ.1:8; 6:20)

8. Եմանի (Ղևտացի ընտանիք) որդիները և դուստրերը Տանարում փառաբանություն էին առաջնորդում (1 Մնաց.25:5-6)

9. Նոր դարում որդիներն ու դուստրերը կմարգարեանան (Հովել 2:28-29)

Գ. Առաջնորդ կանայք

1. Մովսեսի քույրը՝ Մարիամը, կոչվում էր մարգարեուհի (Ելից 15:20-21 նաև Միք.6:4)

2. Աստծո կողմից շնորհալի կանայք գործում էին Խորանի համար (Ելից 35:25-26)

3. Մի ամուսնացած կին Դեբորա անունով, նույնպես մարգարեուհի (տես՝ Դատ.4:4), առաջնորդեց բոլոր ցեղերին (Դատ.4:4-5; 5:7)

4. Ողղան մարգարեուհի էր, որին Հովսիա Թագավորը խնդրեց կարդալու և բացատրելու նոր գտնված «Օրենքի Գիրքը» (4 Թագ.22:14, 2 Մնաց.34:22-27)

5. Եսթեր թագուհին աստվածավախ կին էր, որը փրկեց Պարսկաստանի հրեաներին

#### II. Նոր Կտակարանը

Ա. Մշակույթային առումով կանայք թե՛ հուդայականության մեջ և թե՛ հունա-հռոմեական աշխարհում համարվում էին երկրորդ դասակարգի մարդիկ՝ քիչ իրավունքներով կամ արտոնություններով (բացառությամբ Մակեդոնիայի):

Բ. ՆԿ-ում կանայք առաջնորդական դերում

1. Եղիսաբեթն ու Մարիամը՝ Աստծո մոտ հավատքով կանայք էին (Ղուկ.1-2)

2. Աննան՝ Տաճարում ծառայող մարգարեուհի (Ղուկ.2:36)
3. Լիդիան՝ տնային եկեղեցու հավատացյալ և ծառայող (Գործք 16:14,40)
4. Փիլիպպոսի չորս կույս աղջիկները մարգարեուհիներ էին (Գործք 21:8-9)
5. Փիբեն՝ Կենքրայի եկեղեցու սարկավագուհին (Հռոմ.16:1)
6. Պրիսկիլան՝ Պողոսի գործակիցը և Ապողոսի ուսուցիչը (Գործք 18:26, Հռոմ. 16:3)
7. Մարիամը, Տրիֆինան, Տրիֆոզան, Պերսիդեն, Հուլիան՝ Ներեոսի քույրը, Պողոսի մի քանի գործակից կանայք (Հռոմ.16:6-16)
8. Հունիա (KJV), հավանաբար մի կին-առաքյալ (Հռոմ.16:7)
9. Եվոդիան և Սյունտիքը՝ Պողոսի գործակիցները (Փիլիպ.4:2-3)

III. Ինչպե՞ս է մեր օրերի հավատացյալը հավասարակշռության բերում աստվածաշնչյան տարամետ օրինակները՝

Ա. Ինչպե՞ս կարող է մարդ տարբերել պատմական կամ մշակութային ճշմարտությունները, որոնք կիրառվում են միայն բնագրի կոնտեքստում, հավիտենական ճշմարտություններից, որոնք ուժի մեջ են բոլոր եկեղեցիների, ցանկացած տարիքի հավատացյալների համար:

1. Մենք պետք է բնագրի հեղինակի մտադրությանը մոտենանք շատ լրջորեն: Աստվածաշունչը Աստծո Խոսքն է և հավատքի ու կյանքի համար միակ աղբյուրը:
2. Մենք պետք է զբաղվենք հստակ երևացող պատմականորեն պայմանավորված ներշնչված տեքստերով:

ա. Իսրայելի (Գործք 15; Գաղ.3) պաշտամունքները (այսինքն՝ ծեսերն ու պատարագները)

բ. Առաջին դարի Հուդայականությունը

գ. Պողոսի 1 Կորնթացիներում հստակ նշած պատմականորեն պայմանավորված հայտարարությունները

(1) Բազմաստված Հռոմի օրենսդրական համակարգը (1 Կորնթ.6)

(2) Ստրուկ մնալը (1 Կորնթ.7:20-24)

(3) Ամուրիները (1 Կորնթ.7:1-35, տե՛ս ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՈՒՐԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՍՈՒՄՆՈՒԹՅՈՒՆԸ)

(4) Կույսերը (1 Կորնթ.7:36-38)

(5) Կուռքերին կատարած զոհաբերությունները (1 Կորնթ.8; 10:23-33)

(6) Տերունական Ընթրիքին անպարկեշտ պահվածքը (1 Կորնթ.11)

3. Աստված լիարժեք և հստակ կերպով հայտենց Իրեն հատուկ մշակույթի մեջ, հատուկ օր: Մենք պետք է լուրջ վերաբերվենք հայտնությանը, բայց ոչ դրա պատմական միջավայրի յուրաքանչյուր ոլորտին: Աստծո Խոսքը գրվել է մարդկային լեզվով, ուղղվել հատուկ մշակույթի մեջ ապրող մարդկանց, հատուկ ժամանակի մեջ:

Բ. Աստվածաշնչյան մեկնաբանությունը պետք է հետևի բնագրի հեղինակի մտադրությանը: Ի՞նչ էր նա ասում իր օրերի մարդկանց համար: Մա շատ կարևոր է ճիշտ մեկնաբանության համար: Բայց այնուհետև մենք պետք է այն կիրառենք մեր օրերի համար: Իրական մեկնաբանական խնդիրը հնարավոր է տերմինների սահմանումն է:

1. Հովվական ծառայությունից բացի արդյո՞ք գոյություն ունեին այլ ծառայություններ, որոնք համարվում էին առաջնորդական:
2. Արդյո՞ք սարկավագուհիները կամ մարգարեուհիները առաջնորդներ էին:

Միանգամայն պարզ է, որ Պողոսը 1 Կորնթ.14:34-35 և 1 Տիմ.2:9-15-ում հաստատում է, որ կանայք չպետք է ընդհանուր պաշտամունքը առաջնորդեն: Բայց ինչպե՞ս կիրառեն սա մեր օրերում: Ես չեմ ցանկանում, որ Պողոսի կամ իմ մշակույթը լռեցնի Աստծո Խոսքը և կամքը: Հնարավոր է Պողոսի օրերում շատ սահմանափակ էին, սակայն մեր օրերում էլ հնարավոր է չափազանց ազատ են: Ես ինձ այնքան անհարմար եմ զգում ասելու, որ Պողոսի խոսքերը և ուսմունքները պայմանական են, առաջին դարի՝ տեղական իրավիճակների հետ կապված ճշմարտություններ: Ո՞վ եմ ես, որ թույլ տամ իմ միտքը կամ իմ մշակույթը ժխտի ներշնչված հեղինակին:

Գորդոն Ֆիի *Ավետարանը և Հոգին*, (Gordon Fee, *Gospel and Spirit*) գիրքը իրապես օգնել է ինձ:

Սակայն ինչպե՞ս վարվել, երբ կան կին առաջնորդների աստվածաշնչյան օրինակներ (նույնիսկ Պողոսի թղթերում. տես՝ Հռոմ.16): 1 Կորնթացիների 11-14-ում Պողոսի քննարկումը ընդհանուր պաշտամունքի վերաբերյալ այս բանի գեղեցիկ օրինակն է: 11:5-ում կարծես թե նա թույլ է տալիս կանանց գլուխները քողարկած քարոզել և աղոթել ընդհանուր պաշտամունքի ժամանակ, մինչդեռ 14:34-35-ում նա պահանջում է, որ լուռ մնան: Կային սարկավագուհիներ /սպասավորուհիներ/ (տես՝ Հռոմ.16:1, տե՛ս ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿԱՆԱՅՔ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ՝ ՊՈՂՈՍԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ) և մարգարեուհիներ (տես՝ Ղուկ. 2:36 և Գործք 21:9): Այս տարբերությունն է, որ ազատություն է տալիս ինձ ճանաչելու Պողոսի մեկնաբանությունները (կապված կանանց սահմանափակումների հետ) սահմանափակված միայն առաջին դարի Կորնթոսի և Եփեսոսի համար (հավանաբար կանայք սուտ վարդապետների համար իրենց տնային խմբակներում կամ եկեղեցիներում երկրորդական խոսնակներ էին համարվում): Երկու եկեղեցիներում էլ կային կանանց հետ կապված խնդիրներ, որոնք գործադրում էին իրենց նոր ձեռք բերած ազատությունը (տես՝ Բրյուս Ուիլյամս, *Պողոսի Կորնթոսից Հեռանալուց Հետո*, /Bruce Winter, *After Paul Left Corinth*/), որը հավանաբար դժվարություններ էր առաջացրել եկեղեցու համար իրենց հասարակությանը Քրիստոսի համար ձեռք մեկնելու /ավետարանելու/: Նրանց ազատությունը պետք է սահմանափակվեր, որպեսզի ավետարանը ավելի արդյունավետ լիներ:

Իմ օրերը Պողոսի օրերի ճիշտ հակառակն է: Իմ օրերում ավետարանը հնարավոր է սահմանափակվեր, եթե արտահայտիչ, վարժ կանանց թույլ չտային ավետարանը վկայելու, առաջնորդելու: Ո՞րն է ընդհանուր պաշտամունքի գլխավոր նպատակը: Արդյո՞ք ավետարանչությունը և աշակերտությունը չէ: Կարո՞ղ են արդյոք կին առաջնորդները պատվել և հանձնել Աստծուն: Աստվածաշունչը որպես մի ամբողջություն կարծես թե ասում է «այո»:

Ես ուզում եմ զիջել Պողոսին. իմ աստվածաբանությունը հիմնականում Պողոսյան է: Ես չեմ ցանկանում չափից դուրս ժամանակակից ֆեմինիզմի ազդեցության կամ մանիպուլյացիայի ներքո գտնվել: Սակայն զգում եմ, որ եկեղեցին դանդաղել է արձագանքելու աստվածաշնչյան ակնհայտ ճշմարտություններին, ինչպես օրինակ ստրկության, ռասսիզմի, մոլեռանդության և սեռական խտրականության աննպատակահարմարությանը: Այն նաև դանդաղել է արձագանքելու այս ժամանակակից աշխարհում կանանց չարաշահման հարցի շուրջ: Աստված Քրիստոսով ազատեց ստրուկներին և կանանց: Ես չեմ համարձակվում թույլ տալ, որ մշակույթով կապված տեքստը նրանց կրկին շղթայի:

Եվս մի բան. ես որպես մեկնաբան գիտեմ, որ Կորնթոսի եկեղեցին շատ քայքայված վիճակում էր: Խարիզմատիկ պարզևները գնահատված և ի ցույց էին դրված: Հնարավոր է կանայք այս բանի մեջ էին մեղադրվում: Ես նաև հավատում եմ, որ Եփեսոսը սուտ վարդապետների ազդեցության տակ էր, որոնք առիթից օգտվելով կանանց օգտագործում էին որպես Եփեսոսի տնային եկեղեցիներում փոխարինող խոսնակների:

#### Գ. Հետագա ընթերցանության համար առաջարկներ՝

1. *Ինչպես Կարդալ Աստվածաշունչը Իր Լիարժեքությամբ*, Գորդոն Ֆիի և Դագ Սթյուարթ (How to Read the Bible For All Its Worth, by Gordon Fee and Doug Stuart (pp. 61-77))
2. *Ավետարան և Հոգի. Նոր Կտակարանի Հերմենևտիկայի Խնդիրները*, Գորդոն Ֆիի (Gospel and Spirit: Issues in New Testament Hermeneutics by Gordon Fee)
3. *Աստվածաշնչի Խղթին Խոսքերը*, Ուոլթր Ս. Կայլեր, Փիթր Հ. Դեյվիդզ, Ֆ.Ֆ. Բրյուս և Մանֆրեդ Թ. Բրենչ (Hard Sayings of the Bible by Walter C. Kaiser, Peter H. Davids, F. F. Bruce, and Manfred T. Branch (pp. 613-616, 665-667)):

**5:1 «իրար»** Փոխադարձ հնազանդությունը տիեզերական սկզբունք է, որը վերաբերում է բոլոր հավատացյալներին, սակայն որը կարող է իրականացվել միայն Հոգուն զիջելու՝ տեղ տալու շնորհիվ (այսինքն՝ մահ անձնասիրական կյանքին): Սա Անկման հակադարձման ապացույց է:

**NASB, NKJV**  
**NRSV**  
**TEV**  
**NJB**

**«Քրիստոսի վախի մեջ»**  
**«Քրիստոսից երկյուղածելով»**  
**«Քրիստոսի հանդեպ ունեցած ձեր երկյուղից ելնելով»**  
**«Քրիստոսին հնազանդելով»**

«Վախը» հարգալի երկյուղածության ՀԿ-յան հասկացությունն է: ՅԱՀՎԵԻ սրբությունը և բացառիկությունը կամ նույնիսկ հոգևոր տերության (հրեշտակների) ներկայությունը հզոր ազդեցություն է թողնում ընկած՝ մեղավոր մարդկության վրա:

Հավատացյալների միջանձնային փոխհարաբերությունների վրա ազդում է նրանց հավատքի նվիրումը Քրիստոսին: Նրա հանդեպ ունեցած հարգանքը պատճառ է դառնում հարգելու բոլոր մարդկանց, որոնց համար Քրիստոսն Իր կյանքը տվեց (տես՝ Հռոմ. 14:1, 15:13): Հավատացյալները Քրիստոսի հանդեպ իրենց սերը ցույց են տալիս ուրիշներին սիրելու միջոցով (տես՝ 1 Հովհ. 4:20):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍՍՑԻՆԵՐԻ 5:22-24**  
**<sup>22</sup>Կանայք, հնազանդվեցեք ձեր ամուսիններին, ինչպես Տիրոջը: <sup>23</sup>Քանի որ ամուսինը կնոջ գլուխն է, այնպես, ինչպես Քրիստոսը եկեղեցու գլուխն է, և Ինքն է մարմնի Փրկիչը: <sup>24</sup>Ուրեմն ինչպես եկեղեցին է հնազանդվում Քրիստոսին, այնպես էլ կանայք ամեն բանի մեջ թող հնազանդվեն իրենց ամուսիններին:**

**5:22 «Կանայք, հնազանդվեցեք»** Եփես. 5:22-ի հունարեն տեքստում բայ չկա: Բայը ապահովված է Եփես. 5:21-ից (որը հոգով լեցուն կյանքը բնութագրող ներկա ժամանակի հինգ դերբայներից մեկն է): Այս համատեքստում այն հրաման չէ, այլ ներկա չեզոք սեռի կամ կրավորական սեռի դերբայ: Միակ հրամանը տրված է ամուսիններին՝ Եփես. 5:25-ում (ներկա ներգործական հրամայական): Ամուսիններն իրենց կանանց հետ պետք է վարվեն զոհաբերվող, անձնանվեր սիրով, որոնք էլ իրենց հերթին կամովին կհնազանդվեն:

Ինչևէ գոյություն ունեն մի քանի համարժեք՝ զուգահեռ հատվածներ, որոնք հորդորում են կականց հնազանդելու իրենց ամուսիններին՝

1. Կող. 3:18-ում՝ ներկա կրավորական հրամայական
2. Տիտոս 2:5-ում՝ ներկա կրավորական դերբայ՝ կիրառված որպես հրամայական
3. 1 Պետ. 3:5-ում՝ ևս մեկ ներկա կրավորական դերբայ՝ կիրառված որպես հրամայական

Այս զուգահեռ հատվածները ստիպում են թարգմանիչներին Եփես. 5:21-ի դերբայը դնել որպես ներկա կրավորական դերբայ՝ կիրառված հրամայականի տեսքով (տես՝ 1 Պետ. 3:1): Ամեն դեպքում նշանակալի է, որ սեռը կրավորական է: Կանայք պետք է թույլ տան Հոգուն իրականացնել այս գործը իրենց կյանքերում:

Թե՛ *Վերլուծական Հունարեն Նոր Կտակարանը* Բարբարա և Թիմոթի Ֆրիբերգների (*Analytical Greek New Testament* by Barbara and Timothy Friberg) կողմից գրված և թե՛ *Հունարեն Նոր Կտակարանի Վերլուծությունը* Մաքս Չերուիք և Մերի Գրոսվենորի (*An Analysis of the Greek New Testament* by Max Zerwick and Mary Grosvenor) կողմից, այս բայը ընդունում են որպես կրավորական սեռի, սակայն *Վերլուծական Հունարեն Վերանայված Բառարանը*, որը խմբագրվել է Հարոլդ Ք. Սուլթոնի կողմից, *Նոր Կտակարանում Բառապատկերները* Ա. Թ. Ռոբերթսոնի և «Եփեսացիներ» *Խարխախ Աստվածաշնչի Մեկնաբանության* մեջ, Մարկուս Բարթի կողմից, այս բայը ներկայացնում են չեզոք սեռով: Կոյնե հունարենը այս երկու սեռերը մեկում միաձուլելու գործընթացում է:

Պողոսը լուսաբանում է Հոգով լեցուն կյանքը՝ կիրառելով հունա-հռոմեական աշխարհի ընտանեկան միջավայրի իրավունքից զուրկ երեք անդամների օրինակը՝ կանայք, երեխաները և

ծառաները: Նա ցույց է տալիս, թե ինչպես է Հոգին փոխում մշակութային փոխհարաբերությունները հոգևոր փոխհարաբերությունների, իրավունքները՝ պատասխանատվությունների:

Եթե դերբայը չեզոք է, ապա այն շեշտադրում է կնոջ կամավոր մասնակցությունը ամուսնական հնազանդությանը՝ հանուն այն օգտի, որ բխում է հավատացյալ կողակցի հետ խաղաղ, սիրառատ ամուսնությունից: Եթե դերբայը կրավորական է, ապա յան մատնանշում է կնոջ կարիքը թույլ տալու, որ Սուրբ Հոգին Իր գործը կատարի իր սրտում (տես՝ Եփես. 5:18), որը ազդում է թե՛ կնոջ և թե՛ ամուսնու և երեխաների, ինչպես նաև ընտանիքում ծառայող մարդկանց վրա:

❖ **«ինչպես Տիրոջը»** Այստեղ պետք է համեմատել Կող. 3:18-ի հետ՝ «Տիրոջնով»: Հարցը նրանում չէ, որ ամուսինը բարձրագույն իշխանություն է, այլ որ կանայք պետք է հարգեն իրենց ամուսիններին՝ հանուն Քրիստոսի հետ իրենց իսկ ունեցած փոխհարաբերության: Հիսուսը օրինակ է ծառայում թե՛ իշխանությանը հնազանդելու (այսինքն՝ միշտ Աստծո կամքն է), և թե՛ իշխանությունը գործադրելու (այսինքն՝ եկեղեցու վրա, տես՝ Եփես. 5:25) հարցում:

**5:23 «ամուսինը կնոջ գլուխն է... ինչպես Քրիստոսը եկեղեցու Գլուխն է»** Քրիստոսը նկարագրված է որպես ամուսին և եկեղեցին՝ որպես հարս (տես՝ Հայտն. 19:7, 21:2,9): Ամուսինները պետք է վարվեն իրենց աստվածատուր առաջնորդական դիրքում, ինչպես որ Քրիստոսն արեց: Նա Իր անձը տվեց եկեղեցու համար: Սա վերահսկողության հարց չէ, այլ անձի նվիրման հարց:

Արական սեռի գլխավորությունը շատ հակասական հարց է մեր արդի արևմտյան հասարակության մեջ: Սա մի քանի պատճառներ ունի՝

1. մենք չենք հասկանում, թե ինչ է ծառայողական առաջնորդությունը
2. մենք չենք սիրում նահապետական հասարակությունները՝ անհատի վրա մեր ժամանակակից էգալիտար՝ հավասարապաշտ շեշտադրության պատճառով:
3. մենք շփոթված ենք Աստվածաշնչի պարադոքսալ հաստատումներով, երբ որոշ հատվածներում շեշտադրվում է տղամարդու գլուխ լինելը, իսկ ուրիշներում էլ՝ հավասարությունը:

Իմ կարծիքով պատասխանը գտնվում է Հիսուսի թողած օրինակի մեջ՝ եկեղեցու հետ փոխհարաբերության մեջ ճշմարիտ գլուխ լինելու և Հայր Աստծուն՝ ճշմարիտ ծառա (հնազանդությունը): Այս հնազանդությունը ոչ մի կերպ անհավասարություն չի արտահայտում, այլ կազմակերպչական ֆունկցիոնալ կառուցվածք է: Տղամարդու գլուխ լինելը իրենից ներկայացնում է առաջնորդություն, որը անձնավեր կերպով ծառայում է ուրիշների կարիքների համար: Մեր ժամանակակից հասարակությունը մերժում է իշխանությունը, մինչդեռ փնտրում է գորություն՝ փառք:

Անձամբ ես կարող եմ ընդունել տղամարդու գլուխ լինելը որպես անկման արդյունք (տես՝ Ծննդ. 3:16, 1 Տիմ. 2:12-14): Նաև կարող եմ հաստատել այն որպես սուրբգրային գաղափար՝ Հիսուսի կողմից եկեղեցու առաջնորդության օրինակով (տես՝ Եփես. 5:22-33): Բայց դժվար է ընդունել նահապետական լիազորությունը (այսինքն՝ արական սեռի կողմից գերիշխող հասարակությունները) որպես Աստծո հայտնված ծրագիր բոլոր դարերի և հասարակությունների համար (տես՝ Հռոմ . 3:27, 1 Կորնթ. 12:7, 13, Գաղ. 3:28-29, Կող. 3:11): Արդյո՞ք այն փոխադարձությունը, որը հայտնի է Ծննդ. 1:27, 2:18-ում, որը կորավ Ադամի և Եվայի ապստամբության մեջ (տես՝ Ծննդ. 3:16) վերադառնում է փրկությամբ: Արդյո՞ք մեղքի և ստորաբարշտության անեծքի հարցը լուծվում է Հիսուսի բերած փրկագործության մեջ: Ինչպես որ հիմա նոր դարաշրջանն է մուտք գործում հավատացյալների կյանքերից ներս, արդյո՞ք նաև հիմա է սկսում Եդեմի պարտեզում Աստծո հետ ունեցած կատարյալ փոխհարաբերության վերականգնումը:

Ցանկանում եմ նաև հերմենևտիկ բացատրություն տալ այս թեմայի շուրջ: Որպես թարգմանիչ, որ հավատում եմ, որ Սուրբ Գիրքը հանդիսանում է միակ ճշմարիտ Աստծո և Նրա Քրիստոսի ինքնահայտնությունը, զարմացած եմ Սուրբ Գրքի մշակութային առանձնահատկությամբ: ՀԿ-ում դա ակնհայտ երևում է (թվատությունը, կերակուրների հետ կապված օրենքները, բորոտության օրենքները, և այլն): Սակայն շատ ավելի դժվար է մեզ, որպես ժամանակակից Քրիստոնյաներ, տեսնել դա ՆԿ-ում: Ես առավել քան վստահ եմ, որ սա (1) բխում է Աստվածաշնչի հանդեպ մեր ունեցած սիրուց և հարգանքից, և (2) առաջարկվածը տառացի ընկալելու հակվածությունից:

Ինձ համար աչքի ընկնող երկու խնդիրները, որոնք ունեն ակնհայտ մշակութային առանձնահատկություն, հետևյալն են՝ (1) արական սեռի գերիշխող հասարակությունը (նահապետական) և

(2) ստրկությունը: ՆԿ-ը երբեք չի փորձում անդրադառնալ հին աշխարհի մշակութային այս սյունների անարդարությանը: Հավանաբար նման կերպ վարվելու դեպքում կնշանակեր Քրիստոնեության կործանում: Մինչդեռ ավետարանը ժամանակի ընթացքում երկուսն էլ վերացնում է: Աստծո ճշմարտությունը երբեք չի փոխվում, սակայն հասարակություններն են փոխվում: Մահացու սխալ կլինի մեր կողմից, եթե փորձենք առաջին դարի հունա-հռոմեական մշակույթը դարձնել Աստծո կամքը բոլոր մարդկանց համար՝ բոլոր վայրերում, և իհարկե այդ նույնը ճիշտ է նաև իսրայելական մշակույթի համար: Դրանցից յուրաքանչյուրի մեջ Աստված հայտնել է Իրեն՝ հզոր և անփոփոխ կերպերով: Իրական առաջադրանքն այն է, թե ինչպես դրա մշակութային կեղևից կարելի է դուրս բերել հավիտենական սկզբունքները: Հենց այս թեման քննարկող մի հետաքրքիր գիրք է Ֆիի և Սթյուարթի *Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ իմաստով*:

Մի կերպ, որով կարելի է փորձել սահմանել, թե ինչ է հավիտենական՝ հետևաբար բոլոր ժամանակներում բոլոր հավատացյալներին իրար կապող, և ո՛րն է մշակութային կամ անհատական նախասիրություն, դա նայելն է, թե արդյո՞ք Աստվածաշունչը (ՀԿ և ՆԿ) տալիս է միաձայն պատգամ՝ ուղերձ, թե տարբեր կարծիքներ է արձանագրում այդ թեմայի շուրջ (տես՝ Ֆիի և Սթյուարթի *Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ իմաստով*):

Ես վախենում եմ, որ հնարավոր է թույլ տամ իմ հարանվանական կրթությանը, ինքնությանը, մշակույթին և անձնական նախասիրություններին լռեցնելու կամ նվազեցնելու որևէ հայտնված ճշմարտություն: Իմ բարձրագույն հեղինակությունը Աստված է և Նրա հայտնությունը (այսինքն՝ Իր Որդու մեջ է և գրված արձանագրության մեջ՝ Աստվածաշնչի): Սակայն ես գիտակցում եմ, որ Նա Իրեն հայտնել է պատմության մի հատուկ ժամանակահատվածում, մի մասնավոր մշակույթի մեջ և այդ մշակույթի մեջ առկա ամեն բան չէ, որ եղել է Իր կամքով: Մինչդեռ Աստված պետք է խոսեր այդ մշակույթի մեջ ապրող մարդկանց իրենց հասկանալի տերմիններով և կատեգորիաներով: Եվ հետո Աստվածաշունչը մի պատմական փաստաթուղթ է: Ես չեմ համարձակվի անտեսել դրա գերբնական կամ մշակութային կողմը:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԳԼՈՒԽ (kephalē)**  
**SPECIAL TOPIC: HEAD (kephalē)**

Աստվածաբանական մեծ քննարկումներ են եղել «գլուխ» (*kephalē*) տերմինի նշանակության շուրջ: Այս տերմինը կարելի է հասկանալ որպես՝

1. Եբրայերեն համարժեքն է *rosh* (BDB 910, KB 1164), որը կարող է նշանակել՝
  - ա. գլուխ
  - բ. գլխավոր
  - գ. սկիզբ կամ ծագումնաբանություն (տես՝ Առ. 8:23, Ժող. 3:11, Ես. 41:4)
  - դ. ընդհանուր հաշիվ (տես՝ *Հին Կտակարանի Աստվածաբանություն և Բացատրություն*, հատոր 3, էջ՝ 1015-1020)
2. LXX-ում *rosh* թարգմանվում է հունարենի հետևյալ բառերով՝
  - ա. *archē* (սկիզբ, տես՝ Մաղմ. 137:6)
  - բ. *prōtotokos* (առաջին, տես՝ 1 Մնաց. 5:12)
  - գ. *kephalē* (գլուխ)
    - 1) մարդու գլուխ
    - 2) կենդանու գլուխ
    - 3) սարի գագաթ
    - 4) աշտարակի ծայր (տես՝ Մատթ. 21:42)
3. ՆԿ-ում *kephalē*
  - ա. մարդու գլուխ (տես՝ 1 Կորնթ. 11:4,5,7)
  - բ. կենդանու գլուխ
  - գ. ամբողջ անձի համար օգտագործվող դարձվածք
  - դ. սկիզբ կամ աղբյուր (տես՝ 1 Կորնթ. 11:3)



ե. ամփոփում (տես՝ Հռոմ. 13:9)

զ. առաջնորդ

1) Հիսուսը բոլոր իշխանների և պետությունների գլուխն է, տես՝ Կող. 2:10

2) Հիսուսը եկեղեցու գլուխն է (տես՝ Եփես. 4:15, 5:23, Կող. 1:18, 2:19)

է. ամուսինը (տես՝ Եփես. 5:23)

(տես՝ *Նոր Կտակարանի Աստվածաբանության Բառարան*, հատոր 2, էջ՝ 156-163):

**5:24 «ինչպես եկեղեցին է հնազանդվում Քրիստոսին»** Այս բայի ձևը կա՛մ ներկա կրավորական է, կա՛մ էլ Ներկա չեզոք սահմանական եղանակ (տես՝ Եփես. 5:22-ի չորրորդ պարբերության գրառումները): Ինչպես որ կինը հնազանդվում է իր ամուսնուն (1) իր շահի համար (չեզոք սեռ) կամ (2) քանի որ նա Աստծո Հոգով է դա կարողանում անել (կրավորական սեռ), այնպես էլ, եկեղեցին պետք է հնազանդվի Քրիստոսին:

❖ **«եկեղեցի»** Տե՛ս Եփես. 3:10-ում գրառումը և Հատուկ Թեմա Կող. 1:18-ում:

❖ **«ամեն բանի մեջ»** Քրիստոսը, ոչ թե ամուսնիները, պետք է լինի բարձրագույն իշխանությունը (տես՝ Մատթ. 10:34-39): Այս համարը հավատացյալ կնոջը չի կապում բռնացող ամուսնու հետ, ո՛չ էլ քավում է իշխանություն ունեցող ամուսնու կողմից պահանջված չար արարքները կամ գործերը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍՍՑԻՆԵՐԻ 5:25-6:3**

<sup>25</sup>Ամուսիններ, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես Քրիստոսն էլ սիրեց եկեղեցուն և Իր անձը տվեց նրա համար, <sup>26</sup>որ նրան սրբի ու մաքրի ավազանի ջրով՝ խոսքով, <sup>27</sup>որպեսզի այն Իր առջև ներկայացնի որպես փառավոր եկեղեցի՝ առանց արատի, խորշոմի, կամ այլ թերության, այլ սուրբ և անարատ լինի: <sup>28</sup>Այդպես էլ ամուսինները պետք է սիրեն իրենց կանանց, ինչպես իրենց մարմինները: Ով սիրում է իր կնոջը, ինքն իրեն է սիրում: <sup>29</sup>Որովհետև ոչ մեկն իր մարմինը չի ատում, այլ սնում և խնամում է այն, ինչպես Տերն էլ՝ եկեղեցին: <sup>30</sup>Քանի որ Նրա մարմնի անդամներն ենք, Նրա մարմնից ու Նրա ոսկորներից: <sup>31</sup>Սա սրա համար տղամարդը պիտի թողնի իր հորն ու մորը և միանա իր կնոջը, և երկուսը մեկ մարմին պիտի լինեն: <sup>32</sup>Սա մեծ խորհուրդ է, բայց ես խոսում եմ եկեղեցու և Քրիստոսի մասին: <sup>33</sup>Ուստի թող ձեզնից ամեն մեկն իր կնոջն այնպես սիրի, ինչպես իր անձն է սիրում, իսկ կինը թող ակնածի ամուսնուց: <sup>6:1</sup>Չավակներ, ձեր ծնողներին հնազանդ եղեք Տիրոջով, որովհետև դա է ճիշտը: <sup>2</sup>«Պատվի՛ր քո հորը ու մորը» . սա առաջին պատվիրանն է, որ խոստում ունի՝ <sup>3</sup>«որպեսզի լավ լինի քեզ համար, և երկար կյանք ունենաս երկրի վրա»:

**5:25 «Ամուսիններ, սիրեցե՛ք ձեր կանանց»** Սա ներկա ներգործական հրամայական եղանակ է, որը միակ հրամայականն է ամբողջ պարբերության մեջ: Ամուսինը պետք է ստեղծի տան մեջ հոգևոր մթնոլորտը՝ շարունակելով սիրել իր կնոջը ինչպես որ Քրիստոսը սիրեց եկեղեցուն: Սա հիմնովին դրական հայտարարություն է իր օրերում, սակայն մեր օրերում ամբողջ հաստվածը թվում է թե բացասական է, քանի որ արտացոլում է ընտանիքում տղամարդու գլուխ լինելու աստվածաբանական գաղափարը (տես՝ Ծննդ. 3:16, 1 Կորնթ. 11:3, 2 Տիմ. 2:13): Սակայն Քրիստոնյա ամուսինները ծառա առաջնորդներ են, ոչ թե տերեր:

❖ **«Իր անձը տվեց նրա համար»** Հունարեն *hyper* նշանակում է «հանուն»: Սա վերաբերում է Քրիստոսի փոխանորդական քավությանը: Այն նաև ամուսիններից պահանջվող անձնվեր սերն է:

**5:26 «որ նրան սրբի»** Եփես. 5:26,27-ում հիմնական երկու բայերն էլ անդամ ներգործական ստորադասական են (տես՝ Հովհ. 17:17-19, Տիտոս 2:14, Եբր. 10:10,14,29, 13:12): Սրբացնել բառը «սուրբ»

բառի արմատից է: Արդարացման նպատակը սրբացումն է (տես՝ Եփես . 1:4, Հռոմ . 8:29-30): Ստորադասական եղանակը ավելացնում է անկանխատեսելիության երանգ: Ինչպես որ եկեղեցին պետք է համագործակցի, այնպես էլ՝ կինը:

**NASB**  
**NKJV**  
**NRSV**  
**TEV**  
**NJB**

«նրան մաքրելով լվանալով ջրով՝ խոսքով »  
«մաքրելով այն ջրով լվանալով՝ խոսաքով»  
«նրան մաքրելով խոսքի մաքուր ջրով»  
«իր խոսքով, նրան ջրի լվանալով մաքուր դարձնելով»  
«Նա նրան մաքրեց, ջրում լվանալով՝ խոսքերի տեսքով»

Սա հավանաբար ՀԿ-յան փոխաբերությունն է լվացման վերաբերյալ (տես՝ Հովհ . 15:3, Տիտոս 3:5): Այն կարող է վերաբերել՝

1. մկրտության ծեսին (տես՝ Մատթ.28:19-20, Գործք 2:38, Տիտոս 3:5)
2. մկրտության ժամանակ հանրային հավատքի դավանությանը (տես՝ Գործք 22:16, 1 Կորնթ . 6:11)
3. ամուսնական լուսաբանման շարունակություն՝ հարսի ծիսական լվացումը արարողությունից առաջ, որպես մշակության մաքրության խորհուրդ:

«Խոսքը» հավանաբար չի վերաբերում Աստվածաշնչին, այլ մկրտության կազմակերպչի խոսքերին կամ մկրտվողի հավատքի դավանության խոսքերին:

**5:27 «Իր առջև ներկայացնի որպես փառավոր եկեղեցի»** Սա ևս մեկ անդամ ներգործական ստորադասական եղանակի բայ է, որը ներկայացնում է անկանխատեսելիության տարր: Սա կարծես թե վերաբերում է Գառան Հարսանեկան Ընթրիքին (տես՝ Հայտն . 19:6-9): Ճիշտ ինչպես որ Հիսուսի սերն Իր եկեղեցու համար հեղափոխեց եկեղեցուն, այնպես էլ, ամուսնու սերը իր կնոջ հանդեպ պետք է ամրապնդի և օրհնի Քրիստոնեական ընտանիքը:

❖ «**արատ**» Սա նշանակում է «առանց անմաքրության»:

❖ «**խորշոմ**» Բառացի սա նշանակում է «առանց որևէ տարիքային նշույլի»:

❖ «**սուրբ**» Սա միևնույն «սրբացնել» արմատից է, որ գտնվում է Եփես . 5:26-ում (տես՝ Եփես . 1:4): Տես Հատուկ Թեմա . Սուրբ, Եփես . 1:4-ում:

❖ «**անարատ**» Սա Հին Կտակարանյան զոհաբերությանը վերաբերող տերմին է (տես՝ 1 Պետ . 1:19): Այս նույն հասկացությունը նշվում է որպես եկեղեցու համար Աստծո կամքը Եփես . 1:4-ում: Տես Հատուկ Թեմա . Անարատ, Կող . 1:22-ում:

Այս բոլոր տերմինների ընդհանուր կշռով հասկանում ենք, որ Աստված ցանկանում է Իր ժողովրդի լիարժեք՝ կատարյալ սրբությունը (Եփես . 1:4): Քրիստոնեության նպատակը Քրիստոսակերպությունն է (տես՝ Հռոմ . 8:28-29, Գաղ . 4:14): Մարդու մեջ Աստծո պատկերը վերականգնվելու է:

**5:28 «ինչպես իրենց մարմինները»** Երբ Քրիստոնյա ամուսինները սիրում են իրենց Քրիստոնյա կանանց, նրանք իրականում իրենց են սիրում, քանի որ Քրիստոսի մեջ «մեկ մարմին» են (տես՝ Ծննդ . 2:24): Ինչպես որ Եկեղեցին Քրիստոսի շարունակությունն է, ամուսիններն ու կանայք էլ մեկը մյուսի շարունակությունն են:

**5:29 «սնում է»** Սա թոչնի փոխաբերությունն է, որը նշանակում է «մինչև հասունանալը կերակրել»: Եփես . 6:4-ում այն կիրառվում է երեխաներին դաստիարակելու իմաստով:

❖ «**խնամում է»** Սա նույնպես թոչնի փոխաբերությունն է՝ «ջերմացնել»: Այս երկու տերմինները պետք է մոտիվացնեն յուրաքանչյուր հասուն Քրիստոնյա ամուսնու գործողությունները իր կնոջ

հանդեպ: Ամուսինները իրենց կանանց (և երեխաների), ինչպես նաև հենց իրենց սեփական պարզևների տնտեսներն են: Տան հոգևոր առաջնորդը պետք է ձգտի, որ ընտանիքում յուրաքանչյուր անդամը Քրիստոսի մեջ հասունություն ունենա:

**5:30 «մենք Նրա մարմնի անդամներն ենք»** Եկեղեցին՝ որպես ֆիզիկական մարմին, Պողոսի հավաքական փոխաբերություններից մեկն է, որը շեշտադրում է միաբանությունը անգամ տարբերությունների մեջ (տես՝ 1 Կորնթ. 12:12-27):

**5:31** Սա մեջբերում է Սեպտուագինտայից (LXX)՝ Ծանոց 2:24: Ինչպես որ Քրիստոնեական ընտանիքն է մի օրգանական ամբողջություն, այնպես էլ եկեղեցին և Քրիստոսը: Ընտանիքը պետք է լինի մեկ անբաժանելի ամբողջություն, ճիշտ ինչպես եկեղեցին և նրա Տերը (տես՝ Հովի. 17:11, 21-22) մեկ մարմին են (տես՝ 1 Կորնթացիների 12): Այս ճշմարտությունը հերքում է այդ օրերի և բոլոր օրերի սուտ վարդապետների քարոզած բացառիկությունը:

**5:32 «խորհուրդ»** Լատիներեն Վուլգատտան նշում է «արարողակարգ», սակայն սա տեքստային ներմուծում է, որը հետևում է Հռոմի Կաթոլիկ հավատքի ծեսերին: Պողոսն այս «խորհուրդ» տերմինը մի քանի անգամ է կիրառում, հավանաբար այն բանի համար, որ դա գնոստիկ սուտ վարդապետների սիրելի տերմիններից էր: Պողոսն այն մի քանի կերպ է կիրառում: Այստեղ այն կապ ունի ամուսինների և կանանց՝ Քրիստոսի և եկեղեցու միջև փոխաբերական համեմատության հետ: Ամբողջական քննարկման համար տես 1:9 և 3:3-ի գրառումները:

**5:33 «սեր . . . հարգանք»** Սա ներկա ներգործական հրամայական է և ներկա չեզոք (դեպոնենտ) ստորադասական: Ամուսնուն պատվիրվում է շարունակել սիրել իր կնոջը ինչպես իր անձը (մեկ մարմին, Եփես. 5:31) և կանայք կանչված են հնազանդելու և հարգելու իրենց ամուսիններին, որը կրնդայնի և կամրապնդի նրանց միջև սիրո կապերը: Սա ամբողջ հատվածի (Եփես. 5:21-33) ամփոփ սահմանումն է:

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է այդքան կարևոր հավատացյալների համար աստվածահաճո կյանք ապրելը:
2. Ինչո՞ւ են այս համատեքստում շեշտադրվում սեռական մեղքերը:
3. Կարո՞ղ են արդյոք Քրիստոնյաները շնորհքից ընկնել իրենց ապրելակերպի պատճառով (տես՝ Եփես. 5:5):
4. Ի՞նչ է բովանդակում «Հոգով լցվելը»:
5. Ինչո՞ւ է 5:22-6:9-ը դիտարկվում որպես այդպիսին արմատապես դրական իր օրերի համար, սակայն այդքան բացասական՝ մեր օրերի համար:
6. Արդյո՞ք 5:22-33 սովորեցնում է, որ կանայք պետք է ենթարկվեն տղամարդկանց:
7. Ինչո՞ւ է Պողոսը համեմատում Քրիստոնեական ընտանիքը Քրիստոսի և եկեղեցու հետ: